ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.04.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/118

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Մեգամար» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Համբարյանի (լիազորագիր՝ տրված 04.04.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.03.2022թ. թիվ 26/26-1/5419-2022 գրությամբ «Մեգամար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.03.2022թ. թիվ ՊՆ/02/1416-2022 գրության հիման վրա, 30.03.2022թ. թիվ 26/26-1/5419-2022 գրությամբ նախաձեռնել է «Մեգամար» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Մեգամար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Մեգամար» ՍՊԸ-ն, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 01.04.2022թ. գրությամբ, ներկայացրել է առարկություն հետևյալ բովանդակությամբ.

«ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Մեգամար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգի վերաբերյալ հայտնում եմ հետևյալ դիրքորոշումը:

15.02.2022թ.-ին «Մեգամար» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար խորհրդանշական նվերների գնման «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել և արդյունքում հաղթող է ճանաչվել հրավերի 1-ին չափաբաժնի մասով (խորհրդանշական նվերներ (ՀՀ ԶՈՒ մասնակցությամբ միջազգային միջոցառումների համար նախատեսված (մեծ)):

23.02.2022թ-ին info@armeps.am էլեկտրոնային հասցեից մեր ընկերության megamar.info@mail.ru էլեկտրոնային հասցեին ստացվել է պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցում, որով առաջարկվել է՝ ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում (10.03.2022թ վերջնաժամկետ) պատասխանել շնորհմանը և կից գրությամբ (ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության պետ Վ. Մահտեսյանի անունով) ներկայացնել հաստատված պայմանագրի նախագիծը՝ երկու օրինակից:

Հաշվի առնելով վերոգրյալը, ծանուցում ստանալու օրը (23.02.2022թ-ին) armeps էլեկտրոնային համակարգի միջոցով ընդունվել է շնորհումը, իսկ, այնուհետև, ընկերության տնօրենի կողմից ստորագրվել են պահանջվող բոլոր փաստաթղթերը՝ կնքվելիք պայմանագրի (2 օրինակ), որակավորման, պայմանագրի կատարման ապահովումների բնօրինակները և կից գրությունը: Սակայն, տվյալ պահին տնօրենը օբյեկտիվ պատճառով հնարավորություն չի ունեցել բնօրինակ (թաց) կնիքով կնքել վերը նշված փաստաթղթերը, քանի որ մեր ընկերության լիազոր ներկայացուցիչը (Արտաշես Համբարյանը, անձնագիր՝ ՌԴ 4508498861, տրված 21.03.2006թ)՝ 06.02.2022թ-ից

27.02.2022թ (հիմնավորող փաստաթղթերը կցվում են) ընկերության ընթացիկ գործունեության անհրաժեշտությունից ելնելով գործուղվել էր ՌԴ Մոսկվա քաղաք՝ մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչների հետ բանակցելու, պայմանագրեր և այլ անհրաժեշտ փաստաթղթեր կնքելու նպատակով, ուստի իր հետ տարել էր նաև ընկերության կնիքը:

27.02.2022թ-ին մեր ընկերության լիազոր ներկայացուցիչը ավարտելով գործերը ցանկացել է վերադառնալ ՀՀ, սակայն 24.02.2022թ-ին ՌԴ և Ուկրաինայի Հանրապետության միջև սկսված ռազմական գործողությունների պատճառով Մոսկվա-Երևան թռիչքները չեղարկվեցին կամ անկանոն գրաֆիկով պարբերաբեր հետաձգվում էին, ուստի վերջինս չէր կարողանում վերադառնալ ՀՀ:

Վերոնշյալ իրավիճակը հաշվի առնելով, «Մեգամար» ՍՊԸ տնօրենի կողմից ստորագրված փաստաթղթերը հրատապ ուղարկվել են ՌԴ Մոսկվա քաղաք, որպեսզի կնքվեն և շտապ վերադարձվեն ՀՀ՝ Պատվիրատուին սահմանված ժամկետում ներկայացնելու նպատակով: Միաժամանակ, կապ ենք հաստատել Պատվիրատուի ներկայացուցչի հետ և ներկայացնելով ստեղծված իրավիճակը՝ առաջարկվել է պահանջվող փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային կնիքով ստորագրված, սակայն ստացել ենք մերժում:

06.03.2022թ-ին մեր ընկերության լիազոր ներկայացուցիչը ստանալով ստորագրված փաստաթղթերը՝ կնքել է դրանք և 09.03.2022թ-ին (07.03.-08.03.2022թ նախատոնական և տոնական օրերին փոստային բաժանմունքները չէին սպասարկում) ՌԴ փոստում պատվիրել է հրատապ ավիա առաքում (առավելագույնը՝ 5 աշխատանքային օր) և հիշյալ փաստաթղթերը ուղարկել Պատվիրատուի հասցեով (Պատվիրատուի ներկայացուցիչը մեզ հայտնեց, որ մինչև 18.03.2022թ. փաստաթղթերը հասնելու դեպքում, դրանք կհամարվեն սահմանված ժամկետի մեջ ստացված):

Սակայն, ցավոք, վերոհիշյալ կնքված փաստաթղթերը, մեր կամքից անկախ և մեզ անհայտ պատճառներով չհասավ Պատվիրատուին՝ ՌԴ փոստի հանձնառած ժամկետում (առավելագույնը՝ 5 աշխատանքային օր):

18.03.2022թ-ին ստացվել է արձանագրություն, որտեղ նշված է, որ հանձնաժողովը մերժել է «Մեգամար» ՍՊԸ-ի հայտը:

Այսպիսով, հաշվի առնելով վերը նշված փաստերը պնդում ենք, որ «Մեգամար» ՍՊԸ-ն չի հրաժարվել կամ խուսափել պայմանագիր կնքելուց, ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ

և հնարավոր միջոցները, որպեսզի մեր կամքից անկախ ստեղծված իրավիճակում կատարի իր կողմից ստանձնած բոլոր պարտավորությունները, սահմանված ժամկետում կնքի պայմանագիրը և մյուս անհրաժեշտ փաստաթղթերը: Մեր ընկերությունը կարևորում է գործընկերային հարաբերությունները Պատվիրատուի հետ և 2018թ-ից համագործակցում է ՀՀ պաշտպանության նախարարության հետ:

Հարկ է նշել, որ «Մեգամար» ՍՊԸ-ն գործել է ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջներին համապատասխան, քանի որ՝

1. armeps էլեկտրոնային համակարգի միջոցով ընդունել է շնորհումը (հրավերի 9-րդ կետի 9.6 ենթակետ)

2. 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել է պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները և պատշաճ ծանուցմամբ՝ (պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ) գրավոր առաքել այն Պատվիրատուին (հրավերի 9-րդ կետի 9.5 ենթակետ և ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 330.1 հոդվածի 4-րդ կետ):

Խնդրում եմ.

Հիմք ընդունելով վերոգրյալը և ուսումնասիրելով մեր կողմից ներկայացված փաստերը հիմնավորող փաստաթղթերը՝ օրիաչափ, անհրաժեշտ և բավարար ճանաչել մեր գործողությունները և մերժել «Մեգամար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ պաշտպանության նախարարության պահանջը»:

«Մեգամար» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/118 ընթացակարգի շրջանակներում 04.04.2022թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.03.2022թ. թիվ ՊՆ/02/1416-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/1» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել նաև «Մեգամար» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Մասնակից): Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Մեգամար» ՍՊԸ-ն:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի Մասնակցին առաջարկվել է կնքել պայմանագիր, սակայն Մասնակիցը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն սահմանված ժամկետում պայմանագիր չի կնքել:

Կից ներկայացվում են մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/118 ընթացակարգի շրջանակներում 04.04.2022թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/118 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/118 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեգամար» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 21.02.2022թ. նիստի ընթացքում որոշում է կայացվել «Մեգամար» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 23.02.2022թ. էլեկտրոնային եղանակով «Մեգամար» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Մեգամար» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պայմանագիր չի կնքել և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.03.2022թ. թիվ 26/26-1/5419-2022 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.03.2022թ. թիվ ՊՆ/02/1416-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Մեգամար» ՍՊԸ-ի կողմից 01.04.2022թ. ներկայացված դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ <u>10 աշխատանքային օրվա ընթացքում</u>, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեգամար» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.02.2022թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ 21.02.2022թ. նիստի ընթացքում որոշում է կայացվել «Մեգամար» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 23.02.2022թ. էլեկտրոնային եղանակով «Մեգամար» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Մեգամար» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պայմանագիր չի կնքել և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Ընկերությունը, ներկայացնելով համապատասխան ապացույցներ, 01.04.2022թ. դիրքորոշմամբ մասնավորապես հայտնել է, որ 06.03.2022թ. Ընկերության ներկայացուցիչը, ստանալով ստորագրված փաստաթղթերը, կնքել է և 09.03.2022թ. ՌԴ փոստում պատվիրելով հրատապ ավիաառաքում՝ հիշյալ փաստաթղթերը ուղարկել է Պատվիրատուի հասցեով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը Պատվիրատուին ուղղված 01.04.2022թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/5619-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում է քննվում «Մեգամար» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ թիվ ՍՑ-ՆԳ-2022/118 ծածկագրով ընթացակարգը:

Թիվ ՍՑ-ՆԳ-2022/118 ծածկագրով ընթացակարգի քննության շրջանակներում «Մեգամար» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է առարկություն, որով վերջինս հայտնել է, որ 09.03.2022թ. ՌԴ փոստում պատվիրել է հրատապ առաքում և հիշյալ փաստաթղթերը ուղարկել Պատվիրատուի հասեցով:

Կից ներկայացվել է «отчет об отслеживании отправления с почтовым идентификатором RB290318965RU», համաձայն որի առաքանին հանձնվել է ՌԴ փոստ 09.03.2022թ. ժամը 18:42-ին:

Գործի քննության անհրաժեշտությունից ելնելով՝ խնդրում եմ հայտնել արդյո՞ք նշված ծրարում առկա են եղել պահանջված բոլոր փաստաթղթերը»:

Ի պատասխան նշված գրության, Պատվիրատուն 05.04.2022թ. թիվ ՊՆ/02/1653-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 01.04.2022թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/5619-2022 գրության՝ հայտնում եմ, որ «Մեգամար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում առկա են

պայմանագրի կնքման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Միաժամանակ հայտնում եմ, որ օրենսդրությամբ սահմանված կարգով ընկերության հետ կկնքվի գնման պայմանագիր պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված նոր գնման ժամանակացույցով»:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ **10 աշխատանքային օրվա ընթացքում*, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից***: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ ***ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային*** տարվա, ամսվա և ***ամսաթվի*** կամ ***այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից***, որով որոշված է ժամկետի սկիզբը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ***ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:***

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Մեգամար» ՍՊԸ-ին պայմանագրի նախագիծը՝ 23.02.2022թ. ներկայացված լինելու պայմաններում, այն պատվիրատուին ներկայացնելու համար գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված 10 աշխատանքային օր ժամկետը, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի, հոսել է 24.02.2022թ. և լրացել 10.03.2022թ. ներառյալ, այսինքն՝ Ընկերության կողմից պահանջվող բոլոր

փաստաթղթերը ՌԴ փոստին հանձնվել են սահմանված ժամկետի պահպանմամբ, հետևաբար՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, և առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներից ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 30.03.2022թ. թիվ 26/26-1/5419-2022 գրությամբ «Մեգամար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**